

**/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
«ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

• **Գործուղված անձինք**

«Վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ն. Բաղդասարյան

• **Երկիր/քաղաք/ժամկետ**

Իտալիա, Բարի 26.06 – 29.06.2018թ.

▪ **Նպատակը**

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Ջրի և գյուղատնտեսության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (AQUASTAT) առաջին աշխատանքային հանդիպմանը:

▪ **Քննարկված թեմաները**

- ազգային համակարգողներին ծանոթացնել AQUASTAT-ի ծրագրին,
- AQUASTAT-ի ծրագրի շրջանակում քննարկել կայուն զարգացման 6-րդ նպատակի (ապահովել հասանելիություն և կայուն ձևով կառավարել ջուրն ու սանիտարական պայմանները բոլորի համար) 4-րդ թիրախի 6.4.1 (արդյունավետ ջրօգտագործման դինամիկան) և 6.4.2 (ջրի պակասի պատճառած լարվածության /սթրեսի/ մակարդակը. մաքուր ջրի ետ քաշվելը գոյություն ունեցող մաքուր ջրի պաշարների հարաբերակցությամբ) ցուցանիշները,
- կայուն զարգացման 6-րդ նպատակի ցուցանիշների հաշվարկման ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության մեթոդաբանության ներկայացում և քննարկում,
- AQUASTAT-ի տվյալների շտեմարանի բովանդակության և ձևաչափի, ինչպես նաև հարցաշարի և տվյալների հավաքագրման գործընթացի ներկայացում և քննարկում,
- ուսումնասիրել ազգային վիճակագրական համակարգում հիմնական տվյալների շտեմարանների ռազմավարական պլանավորման և փաստաթղթավորման կարիքներն ու մոտեցումները,
- ուսումնասիրել վիճակագրական ստանդարտների և ուղեցույցների դերն ու շրջանակները, ինչպես նաև կայուն զարգացման նպատակների հետ կապված խնդիրների լուծման համար դրանց օգտագործման հնարավորությունները,
- ուղենշել հետագա գործողությունները, որոնք հնարավորինս կնպաստեն տվյալների հավաքագրման գործընթացում երկրների հաշվետվողականության, ինչպես նաև տվյալների համադրելիության ապահովմանը,

- քննարկել համագործակցության հետագա ուղղությունները և ակնկալվող արդյունքները:

Աշխատանքային հանդիպման երեք օրերի ընթացքում նիստերն ընթացել են բուռն քննարկումներով, հետաքրքիր ներկայացումներով:

▪ Արդյունքները

Հանդիպման առաջին օրը ներկայացվեց ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Ջրի և գյուղատնտեսության վերաբերյալ գլոբալ տեղեկատվական համակարգի ձևավորման գործընթացը, կիրառվող մեթոդաբանությունները, վիճակագրական հիմնական արտադրանքները և այլն: Ներկայացվեց AQUASTAT-ի ծրագրային երկու հիմնական ուղղությունները՝

1. ջրային ռեսուրսների վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը և դրա կիրառումը,

2. աշխարհագրատեղեկատվական համակարգերի վրա հիմնված հիդրոլոգիական կարողությունների հզորացում՝ ջրային ռեսուրսների ընթացիկ վիճակի վերաբերյալ գլոբալ պատկեր ստանալու համար:

Ազգային համակարգողների կողմից կատարվեցին շնորհանդեսներ AQUASTAT հարցաշարի լրացման վերաբերյալ ուշադրությունը սևեռելով մարտահրավերներին և խոչընդոտներին: Հայաստանը ներկայացրեց հարցաշարի լրացման գործընթացը, նշվեց, որ ջրային ռեսուրսների վերաբերյալ վիճակագրության տեղեկատվության հիմնական աղբյուրը հանդիսանում են վարչական ռեգիստրները, մասնավորապես ՀՀ բնապահպանության նախարարությունը և ջրային տնտեսության պետական կոմիտեն: Այդ տվյալները հասանելի են ArmstatBank.am կայքէջում: Ըստ հարցաշարի լրացման մեթոդաբանության, գյուղատնտեսական նպատակով ջրառի մեջ ներառվում է միայն սեփական օգտագործման նպատակով կատարված ջրառի ծավալը: Դա նշանակում է, որ հիմնական ջրառը, որն իրականացնում են ջուր տրամադրող կազմակերպությունները և տրամադրում ոռոգման նպատակով, ներառված չէ այս ծավալների մեջ: Փոխարենը դրանք ներառված են մունիցիպալ նպատակներով ջրառի մեջ: Մեր կողմից առաջարկվեց «Մունիցիպալ նպատակներով ջրառ» տողից հետո ավելացնել նոր տող՝ «որից» մատակարարվում է ոռոգման նպատակով: Հայաստանի կողմից 3-րդ բաժնում «Ոռոգում և Դրենաժ», ներկայացված է միայն մեկ տվյալ 2014թ. համար («Փաստացի ոռոգված տարածք»), որի համար տեղեկատվության հիմնական աղբյուրը հանդիսացել է 2014թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառումը: 3-րդ բաժնի լրացման հարցը քննարկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան բաժնի հետ և ներկայումս նախարարությունն աշխատում է ձևավորել գյուղատնտեսության ոլորտում ջրային ռեսուրսների կառավարման վարչական

տվյալների շտեմարան: Այդ շտեմարանի ձևավորումից հետո հնարավոր կլինի լրացնել հարցաշարի 3-րդ բաժինը:

Հանդիպման երկրորդ օրը ներկայացվեց ջրային ռեսուրսների գլոբալ համակարգի մշտադիտարկման զարգացման հիմնախնդիրները, մասնավորապես սահմանումներում և մեթոդաբանության մեջ առկա անհամաձայնությունները և անորոշությունները, դինամիկ շարքերում առկա բացերը, տվյալների մշտադիտարկման կայունության ապահովման խնդիրները: Առանձնացվեցին այն քայլերը, որոնց ուղղությամբ նախընտրելի է, որ ընթանան առաջիկա գործընթացները՝ տվյալների որակի և հասանելիության հետագա բարելավում, բնապահպանական-տնտեսական հաշիվների մեթոդաբանությամբ նախատեսված տնտեսական գործունեության տեսակներով հնարավորինս համալրում, ԿՁՆ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում:

Երրորդ օրը կազմակերպվեց դաշտային այցելություն, որի նպատակն էր ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և ոռոգման համակարգերի վերաբերյալ համապարփակ գիտելիքների ապահովումը՝ հիմք ընդունելով ջրի խնայողության և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման գաղափարը: Պրակտիկ օրինակներով ներկայացվեցին ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման, ջրամատակարարման, ջրի խնայողության, ոռոգման և դրենաժային համակարգերի նորագույն տեխնոլոգիաները:

Մասնակցությունը հանդիպմանը հնարավորություն ընձեռեց վիճակագրական մարմինների ներկայացուցիչներին կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու հեռանկարներն ու գործողություններն՝ ուղղված AQUASTAT հարցաշարի լրացմանը, ինչպես նաև կայուն զարգացման նպատակների բնապահպանության հիմնահարցերին առնչվող ջրային ռեսուրսների ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման գործիքներին:

Այցելությունն արժեքավոր էր նաև տարբեր երկրների հետ կիրառվող գործիքների, տեղեկատվական աղբյուրների, մշակվող ցուցանիշների համեմատության ընձեռված հնարավորության առումով:

Աշխատանքային հանդիպումը նպաստեց ազգային մակարդակում երկրների տվյալների ուսումնասիրությանը, վերոնշյալ գործընթացներում մարտահրավերների վերհանմանը և հավաքագրման ու վիճակագրության վերաբերյալ երկրների ներկայացուցիչների միջև փորձի փոխանակմանը: Քննարկումներն ամփոփվեցին ներկայացված և քննարկված նյութերի վերաբերյալ հարց ու պատասխանով:

▪ **Նշումներ**

Աշխատանքային հանդիպմանը մասնակցում էին ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Եվրամիության վիճակագրական ծառայության, Հարավային Աֆրիկայի ջրային ռեսուրսների կառավարման միջազգային ինստիտուտի, Ֆինլանդիայի բնական պաշարների ինստիտուտի, Հայաստանի, Ադրբեջանի, Իտալիայի, Բրազիլիայի, Չինաստանի, Խորվաթիայի, Հունգարիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Մալազիայի և Սաուդյան Արաբիայի վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներ:

Այցելության հետ կապված ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից:

«Վիճակագրության պետական
խորհրդի անդամ



Ն. Բաղդասարյան